ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 34-Ա

<<21>> հունիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ՎՃՌՈՎ /ԳՈՐԾ՝ ՇԴ3/0041/02/14/ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ԼԵՎՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԳՅՈՒՂ ԻՍԱՀԱԿՅԱՆ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.01155 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ԼԵՎՈՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի, դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի ապրիլի 11-ի վճիռը /գործ՝ՇԴ3/0041/02/14/՝ մարզ Շիրակ գյուղ Իսահակյան 6-րդ փողոց, թիվ 22 հասցեի բնակարանի նկատմամբ քաղաքացի Սարգիս Լևոնի Սահակյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին, հաշվի առնելով քաղաքացու 2023 թվականի մայիսի 28-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի ապրիլի 11-ի վճիռով /գործ՝ ՇԴ3/0041/02/14/՝ քաղաքացի Սարգիս Լևոնի Սահակյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ գյուղ Իսահակյան 6-րդ փողոց, թիվ 22 հասցեի բնակարանի պահպանման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-043-0021-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.01156 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ 16401 (տասնվեց հազար չորս հարյուր մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Սարգիս Լևոնի Սահակյանին (անձնագիր՝ AM 0669201, տրված՝ 14.03.2012 թվականին, 022-ի կողմից, բնակության հասցեն՝ մարզ Շիրակ, գյուղ Իսահակյան 6-րդ փողոց, թիվ 22 բնակարան):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Սարգիս Լևոնի Սահակյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<21>> հունիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ